ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Ընտրական համակարգերի թափանցիկ և ներառական կառավարման բարեփոխումների առաջխաղացում Հայաստանում



Իրականացման ժամանակահատված: 01.10.2025 - 31.12.2026

ԱլԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 1 737 900

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNDP, International IDEA

Նախագծի նկարագրություն:

ՄԱԶԾ-ի «Հայաստանում ընտրական համակարգերի թափանցիկ և ներառական կառավարման բարեփոխումների առաջխաղացում (ARTEMIS)» նախագիծը աջակցում է վստահելի, ներառական և դիմակայուն ընտրական գործընթացների ամրապնդմանը Հայաստանում՝ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ: Նախագիծը կենտրոնանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) և ստորին մակարդակի ընտրական հանձնաժողովների ինստիտուցիոնալ կարողությունների և անկախության բարձրացման վրա՝ նպատակային վերապատրաստումների, թվային վերափոխման և կառավարման բարելավված մեխանիզմների միջոցով:

ARTEMIS-ը խթանում է անվտանգ և թափանցիկ ընտրությունների անցկացումը՝ ամրապնդելով կիբերանվտանգությունը, ներդնելով ընտրողների նույնականացման տեխնոլոգիաներ և թվային ընտրական աջակցման գործիքներ: Այն նաև ուժեղացնում է նախընտրական ֆինանսավորման և թվային քարոզարշավների վերահսկողությունը, անդրադառնում տեղեկատվական աղտոտվածությանը և ատելության խոսքին, ինչպես նաև ամրապնդում ընտրական ռիսկերի կառավարման և ճգնաժամային պատրաստվածության համակարգերը: Առանձնահատուկ շեշտադրում է արվում գենդերային հավասարության և սոցիալական ներառման վրա՝ ընտրական կառավարման և թեկնածության գործընթացներում կանանց մասնակցության ավելացման, հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելիության բարելավման, ինչպես նաև երիտասարդների, փախստականների և մարգինալացված խմբերի համար քաղաքացիական և ընտրական կրթության ընդլայնման

Ակնկալվող արդյունքներ:

ARTEMIS նախագծի ավարտին ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ստորին մակարդակի ընտրական հանձնաժողովների կարողությունների և անկախության ամրապնդում՝ արտահայտված բարելավված ինստիտուցիոնալ շրջանակներով, վերապատրաստված անձնակազմով և ընտրական կառավարման համար կայուն վերապատրաստման ու սերտիֆիկացման համակարգերով:
- Ընտրական գործընթացների ամբողջականության, անվտանգության և դիմակայունության բարձրացում՝ արդիականացված թվային ենթակառուցվածքների, ընտրողների նույնականացման տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման և կիբերանվտանգության ուժեղացված քաղաքականությունների ու ընթացակարգերի միջոցով:
- Ընտրական գործընթացների թափանցիկության, հաշվետվողականության և վերահսկողության բարելավում, ներառյալ նախընտրական ֆինանսավորման և թվային քարոզարշավների ոլորտում՝ թարմացված կարգավորումների, մոնիթորինգի գործիքների և շահառուների ներգրավման ամրապնդված մեխանիզմների շնորհիվ:
- Ընտրություններում ներառականության և գենդերային հավասարության աճ՝ արտահայտված ընտրական կառավարման և թեկնածության գործընթացներում կանանց ավելի բարձր մասնակցությամբ,